



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2018 թ.  
№ 13 (1030)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին  
երկշաբաթաբեր • հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒ ԱՐԴԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



11-12 OCTOBRE 2018

## ՖՐԱՆԿՓՈՆԻԱՅԻ ՕՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին Երևանում Ֆրանկոֆոնիայի մշտական խորհրդի նիստի բացմամբ մեկնարկեցին Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում: Հայաստան ժամանեցին 84 անդամ պետությունների և կազմակերպությունների պատվիրակություններ, այդ թվում՝ շուրջ 30 երկրների պատվիրակություններ՝ պետության ղեկավարների մակարդակով: Նրանց թվում էին Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոն և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը:

Հոկտեմբերի 11-ն և 12-ին Երևանում անցկացվեց Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովը՝ «Ապրել միասին» կարգախոսով:

Բոլոր ելույթ ունեցողներն անդրադարձան տարածաշրջանային և միջազգային մարտահրավերներին, կայուն զարգացման խնդիրներին, մշակութային բազմազանությանը, կլիմայական փոփոխությունների դիմակայմանը, երիտասարդության դերին, թվային ֆրանկոֆոնիային, կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը և այլ հարցերին:

Գագաթնաժողովի մասնակիցներն իրենց ելույթներում արժևորեցին ֆրանսիացի մեծանուն հայ շանսոնյե Շառլ Ազնավուրի երգարվեստը և հումանիստական գաղափարները:

Երևանում ստեղծվեց «Ֆրանկոֆոնիայի ավան», որը դարձավ մշակութային հաղորդակցության և երկխոսության իսկական կենտրոն, ուր համապատասխան տաղավարներում իրենց ժողովուրդների մշակութային բազմազանությունը, արհեստներն ու արվեստը ներկայացրին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ երկրները:

Հյուրերի համար Երևանում կազմակերպվեցին էթնոմշակութային մի շարք այցելություններ:

Հայաստան-Ֆրանկոֆոնիա հարաբերությունները սկսվել են 2003 թ.-ից երբ Ուազադուգուի (Բուրկինա Ֆասո) գագաթնաժողովում Հայաստանը ձեռք բերեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ: 2008 թ.-ին Հայաստանը դարձավ ասոցիացիայի անդամ, իսկ 2012 թ.-ին՝ լիիրավ անդամ:

Ֆրանկոֆոնները մոլորակի ֆրանսալեզու բնակիչներն են: Աշխարհում շուրջ 274 մլն մարդու համար հիմնական լեզուն ֆրանսերենն է: Ֆրանսերեն լեզուն համարվում է պաշտոնական լեզու աշխարհի 32 երկրներում:

Ֆրանկոֆոնիան (ֆրանսերեն՝ La Francophonie) միջազգային կազմակերպություն է՝ հիմնադրված 1970 թ., որպես ֆրանսերենի և համընդհանուր արժեքների ամրագրման և տարածման հաստատություն: Կազմակերպության մեջ ընդգրկված են 54 լիիրավ, 4 ասոցացված և 26 դիտորդի կարգավիճակ ունեցող պետություններ:

Որոշում կայացնող քաղաքական մարմինը ֆրանսախոս երկրների և կառավարության ղեկավարների համաժողովն է՝ Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովը:

Բացի ֆրանսերեն լեզվի և մշակութային ու լեզվաբանական բազմազանության տարածումը խրախուսելը, կազմակերպության գլխավոր առաքելությունը խաղաղությանը, ժողովրդավարական արժեքների տարածմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, կրթության խթանմանը, ինչպես նաև մշակութային և քաղաքակրթությունների երկխոսության ակտիվացմանը և անդամ երկրների միջև համերաշխության տարածմանը նպաստելն է:

## Հոկտեմբերի 8-ին Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ հայկական պետական մանկավարժական համալսարանի առաջին կուրսեցիների ավանդական երդման արարողությունը



### Հոկտեմբերի 15-ը Խաչատուր Աբովյանի ծննդյան օրն է



## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ՝ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ, ԱՆԿՐԿՆԵԼԻ ԵՐԵՎՈՒՅԹ

Նա գիտության իր ծարավով, իր համեստ ձգտումներով, սակավապետությամբ, ինչպես և իր մտքի հատկությամբ, իր սիրով և կամքի կայունությամբ վայելում էր մեր շնորհապարտությունն ու հարգանքը:

*Ֆրիդրիխ Պարրոտ*

Մտքով մտնում ենք Քանաքեռ և խոնարհ գլուխ տալիս նրա այն հինավուրց քարերին, դարավոր հողին, որ ծնել է այդպիսի ազնիվ, անարատ, իմաստուն մարդ:

*Վերա Չվյագինցևա*

Անկասկած, մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որը նման սիրով ու այնպիսի համբերությամբ, նվիրված լիներ մանուկների դաստիարակության գործին, ինչպիսին Աբովյանն է:

*Կառլ Կու*

Աբովյանը եղավ մինը այն հայերին, որ ամենն ավելի խանդով, հավատքով ու համարով երազեցին, ցանկացան ու պատրաստեցին ազատագրումը հայ մտքին, և իր գործը... հայկական պանթեոնին մեջ պիտի կանգնի հավիտենապես կենդանի ու հաղթական՝ իբրև մեծագույն հիշատակներեն մին՝ հայ համձարին բարձրության ու հայ սրտին գեղեցկության :

*Արշակ Չոպանյան*

## ԱՌՎՆՑ ՈՒՍՈՒՅՉԻ ԾԿԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Արարչագործութեան մեջ Աստուած մարդը ստեղծեց անոր տարապատկեր առաքելութեամբ ու պաշտօններով՝ հողագործ, անասնապահ, դերձակ, երաժիշտ, քազաւոր, իշխան, քահանայ, մարգարտ, և դեռ՝ շատ ու շատ ուրիշներ, բայց չստեղծեց երկու բան՝ ուսուցիչը և ստրուկը: Մոռցա՞ւ արդեօք. Աստուած ուսուցիչը չստեղծեց, որպէսզի ան ինքնզինք արարէ, գտնէ իր պատկերին իսկութիւնն ու առաքելութիւնը. իսկ չստեղծեց ստրուկը, որպէսզի մարդը, հետևելով Արարչին, ինքնիր մէջ երբեք չստեղծէ անտանելի:

Եթէ Աստուած մօրը տուաւ ստեղծագործութիւնը շարունակելու վսեմ գործը, ապա զայն գեղեցկացնելու հանձարը ուսուցչին տրուեցաւ, այն ճարտարապետին, որ կառուցը կրնար դարձնել ոգեկանութիւն. այն լուսամարդուն, որ հայեացքներու մէջ տեսիլք կրնար ցանել. այն մեծ յեղափոխականին, որ կրնար սուտի գահերը կործանել...

Ստորագրուած մտորումներս և խոհերս ամուռ-ազգանուններու վրայ չեն սևեռուած բնաւ, և մտադրութիւն ալ չունին, բայց անոնք կը դեգերին պատկերներու և երևոյթներու շուրջ, որոնք մի գուցէ անուն չունենալով իսկ՝ իրական են ու տեսանելի: Վերադասի և ստորադասի կամակատարներ, այսօր, իբր ինքնավստահ ցուցադրութեամբ, բայց վախտուրած սրտով ու հայեացքով լեցուցեր են Տիրոջ այգին ու ազգի անդաստանները. ի՞նչ ընելու. ամէն մարդ՝ այս խեղճուկներէն սկսած, ինքնիրեն թող տայ այս հարցը...

Եւ հիմա, կ'արժէ՞ միթէ հրաժարիլ այս մաշկեակէն, և դեգերիլ մերկ՝ նոյնիսկ չարժանանալով տերևի մը ծածկոյթին... Ի՞նչ փոյթ, անոր տէրը զինք մերկ կ'ուզէ տեսնել, առանց սակայն այդ մերկութեան գեղեցկութիւնը վայելելու, վասնզի ստրուկին մերկութիւնը գեղեցկութիւն չունի...

Սոսկալին սակայն, կեանքի մէջ, երբ ուսուցիչը ստրուկ է, և ստրուկ կը դառնայ, քանզի ստրուկ չեն ծնիր, այլ կը դառնան, ինչպէս շրջասացաբար պիտի յայտարարէր Գիրքը. «Երեք բանի համար երկիրը կը դողայ ու չորս բան կայ, որոնք չի կրնար տանիլ: Ծառան՝ երբ թագաւորէ...» (Գիրք Առակաց 30.21-22ա): Իսկ ուսուցիչը ամենահզօր թագաւորն է, հանձարի իմաստունը, պանծալի հրամանատարը և սրբազգեստ հոգևորականը:

Կերպարներու կերպարը իրաւունք չունի ստրուկ ըլլալու, պարզ պատճառով՝ բնութեան օրէնքով իր նմանն է ծնելու, չէ՞... Ժողովուրդի գոյատևման ուժին, սխրանքներու յաղթանակին, բարոյական վերթևանմին գաղտնիքը ուսուցչի մտքին, սրտին և աչքերուն մէջ է՝ բացառի:

Առանց ուսուցչի չկայ ժողովուրդը, և վա՛յ այն ժողովուրդին, որուն ուսուցիչը ստրուկ է:

*Արշակի ԳԱՐՈՒՅԱՆ*

## ԲԱՐԵՓՈՒՄՈՒՄՆԵՐ՝ ՀՕԳՈՒՏ ՀԱՅՅՈՐԴԻ

ԲՈԿ-ի նախագահ Սմբատ Գոգյանը հանդիպեց Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Նա ներկայացրեց գիտական աստիճաններ շնորհող կառույցի նոր մոտեցումները գիտական ատենախոսությունների պաշտպանության գործընթացին, հանգամանորեն խոսեց փոփոխությունների մասին, որոնք նպատակ ունեն բարեփոխելու գիտության ոլորտը:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպմանը նա կարևորեց և առանձնացրեց մանկավարժության ասպարեզը. «...հատկապես այստեղ պետք է անաչառ լինել պաշտպանական գործընթացի ստվերային ամեն տեսակ դրսևորումներուն»:

Ներկայացնելով իր մի շարք նկատառումները՝ ԲՈԿ-ի նախագահը բարձրաձայնեց ոլորտում կուտակված խնդիրները լուծելու իր հաստատականության մասին:

Ըստ Ս. Գոգյանի՝ թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունը առձակատու է հայցորդի և մասնագիտական խորհրդի անդամների միջև, թերություններով ատենախոսությունը մինչև ԲՈԿ հասցնելու համար մեղավոր են գիտական ղեկավարը, փորձագետները, ընդդիմախոսները և մասնագիտական խորհուրդը, ոչ թե հայցորդը, ԲՈԿ-ը վերահսկում է ոչ թե հայցորդի, այլ մասնագիտական խորհրդի աշխատանքը:



խագահը: Նրա կարծիքով իրականացվող հիմնարար փոփոխությունների և մասնագիտական խորհուրդների ձևավորման ռոտացիոն նոր կարգի նպատակը գիտնականի բարոյական պատասխանատվության գիտակցումը բարձրացնելն է:

Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները բազմաթիվ հարցեր ուղղեցին ԲՈԿ-ի նախագահին, հարց ու պատասխանը երբեմն-երբեմն վերածվում էր երկխոսության: Դասախոսների հարցերը վերաբերում էին թեկնածուական և դոկտորական ատենախոսություններին ներկայացվող չափանիշներին ու պահանջներին, գիտական կոչումների շնորհման կարգի հնարավոր փոփոխություններին, այսպես կոչված «սև» ընդդիմա-



Այսուհետև մասնագիտական խորհուրդները հաճախակի կփոփոխվեն, և չի գործի մի քանի տարով խորհուրդների հաստատման կարգը. նպատակը լավագույն մասնագետների պեղումն է, խորհուրդների աշխատանքի որակի բարձրացումը, որը կանդրադառնա նաև հայցորդի աշխատանքի վրա, ատենախոսությունը չպետք է փոփոխվի նախնական պաշտպանությունից հետո, հայցորդն էլ իր ցանկությամբ կարող է ընտրել մասնագիտական խորհրդի 6 անդամի, որոնք կհամաձայնվեն աշխատել տվյալ խորհրդում և այլն:

«Մենք կարողացել ենք գործընթացները ձևափոխել հօգուտ հայցորդի, որպեսզի պաշտպանությունը դառնա հեշտ, բայց պատասխանատու հայցորդի համար: Սրանով մենք պաշտպանում ենք ոչ թե հայցորդին, այլ գիտությունը», -ասաց Բարձրագույն որակավորման կոմիտեի նա-

խոսի ինստիտուտին, պաշտպանությունից առաջ տպագրվող գիտական հոդվածների քանակին, մասնագիտական խորհուրդների ձևավորմանը և այլն:

ԲՈԿ-ի նախագահը պատասխանեց բոլորի հարցերին՝ հստակ ու պարզ մանրամասնելով իր որդեգրած կառույցի տեսլականը՝ պետք է կոտրենք կարծրատիպերը, գիտության ոլորտ չպետք է մտնեն պատահական մարդիկ, ովքեր ասելիք չունեն:

Սմբատ Գոգյանի համար, օրինակ, անհասկանալի է դոցենտի կոչումը, նաև այն, որ գիտությունը հեղեղված է դոկտոր, պրոֆեսորներով:

Առայժմ կրադարեն գործել մասնագիտական պաշտպանական խորհուրդների մեծ մասը, կլինի միայն գիտական քարտուղար մինչև ԲՈԿ-ի նախագիծը առաջիկա ամիսներին հաստատվի կառավարության կողմից:

*Միլվա ԱՄՐՅԱՆ*



### ...ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ



➤ Յակտիվ մասնակցություն է ցուցաբերում, սակայն ես չեի ուզի, որ նրանք երբևէ դառնան գործիք ինչ-որ մեկի ձեռքին: Նոր իրականության մեջ երիտասարդությունը պետք է ունենա արժանապատիվ տեղ և դեր», -ասաց Ա. Սահակյանը:

Ելնելով ոչ թե նորաձևությունից, այլ անհրաժեշտությունից՝ պրոֆեսորն առաջ քաշեց համալսարանում սոցիոլոգիական լաբորատորիա ունենալու հարցը և ղեկավարությանը խնդրեց աջակցել այդ հարցում:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի նախագահ Սամվել Մանուկյանի սոցիոլոգիական հետազոտությունը Հայաստանում սոցիալական անհավասարության և այն ծնող պատճառների մասին էր: 2011, 2013 և 2017 թվականներին հայ հասարակության անդամների կյանքի որակի ուսումնասիրության, բոլորնյան գործընթացների իրականացման մեջ ուսանողների կյանքի ոճին ու որակին միտված և այլ հետազոտությունների ընթացքում նա հանգել է մի շարք լուրջ եզրահանգումների: Հայաստանում օբյեկտիվորեն բավականին բարձր է անհավասարությունը, ինչն ազգային անվտանգության հարց է, Հայաստանում անհավասարությունը համակարգային է, այն կեղծիքի ու անարդարության արդյունք է»:

Ձեկուցողն անհանգստացած է՝ սոցիալացումների ընթացքում պարզել է, որ երիտասարդությունը նկատելիորեն տեղյակ չէ մի շարք քաղաքական-հասարակական իրողություններից:

Նա հայաստանյան «թավշյա հեղափոխության» համատեքստում ներկայացրեց իր դիտարկումները և հանդես եկավ առաջարկություններով:

Ակտիվ հարց ու պատասխանից հետո աշխատանքը շարունակվեց չորս մասնաճյուղերում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



### Վկայագրեր՝ միջազգային ծրագրի մասնակիցներին

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 2016 թվականից, Թբիլիսիի պետական (Վրաստան), Վիեննայի (Ավստրիայի) Բուկուի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանների հետ, մասնակցում է «Տուրիզմի կայուն զարգացման հնարավորությունները Հարավային Կովկասում» ծրագրին, որի նպատակն է նորարարական մոտեցումներով հետազոտական աշխատանքներ իրականացնել և լուծումներ առաջարկել կայուն զբոսաշրջության զարգացման ոլորտի խնդիրների լուծման համար՝ համախմբելով գիտական հաստատություններին և անհատներին: Ծրագրի հայաստանյան համակարգողն է ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոյեցյանը:

Մարմարիկ գետի հովտի Մեղրաձոր համայնքում անցկացված հետազոտական աշխատանքներին մասնակցել էին բուհի ոչ միայն աշխարհագետները, այլև կենսաբաններ, պատմաբաններ, սոցիոլոգներ: Ըստ Ա. Խոյեցյանի՝ հետաքրքիր թիմ էր ստացվել, որն էլ դաշտային արդյունավետ հետազոտություններ իրականացրեց՝ նպաստելով համայնքի աշխատանքներին:

Մանկավարժական համալսարանի ղեկավարը բարձր գնահատեց միջազգային համագործակցությունը. հատկապես երբ բուհը հավակնում է միջազգային ճանաչում ձեռք բերել: Սա ևս մեկ քայլ է այդ ճանապարհին: Ծրագրի մասնակիցներին՝ 11 դասախոսներին և 24 ուսանողներին մասնակցության վկայագրեր հանձնելով՝ ղեկավարը մաղթեց արդյունավետ և շարունակական աշխատանք:

### ԳՐԹԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԸԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի «Ֆրանսիացի հայագետներ» (19-20-րդ դարեր) գրքի շնորհանդեսը, որին մասնակցում էին հանրապետության անվանի գիտնականներ, դասախոսներ և ուսանողներ: Գրքի շնորհանդեսը համընկավ Հայաստանում Ֆրանկոֆոնիայի 17-րդ զագաթնաժողովի անցկացմանը և մեծ հայ, աշխարհի քաղաքացի, շանսոնյե

աշխատանքը: Ելույթ ունեցավ ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանը, ով գնահատելով գիրքը, միաժամանակ խոսեց հեղինակի մարդկային տեսակի ու որակների մասին՝ ամփոփելով. «Գրելով Շառլ Ազնավուրի բանաստեղծական արվեստի մասին՝ Աելիտա Դոլուխանյանն այն ներկայացրել է հայի ճակատագրի համատեքստում, իսկ ֆրանսիացի հայագետներին ներկայացնող գիտական աշխատությունները



Շառլ Ազնավուրի անդառնալի կորստին:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը կարևորեց ֆրանկոֆոնիայի օրերին հրատարակված գիտական աշխատությունը: Նա ընդգծեց պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի աշխատասիրությունը, շնորհավորեց հեղինակին և գրքին մաղթեց բարի ճանապարհ:

պատմագիտական լուրջ արժեքներ են»:

«Սա բացառիկ գիրք է՝ ազգային և բարոյական մեծ նշանակությամբ, -ասաց բանասիրական գիտությունների դոկտոր, գրող Նորայր Աղալյանը,-Ա. Դոլուխանյանը ծանրակշիռ գիտական վաստակ ունի, իսկ այս գիրքը առավել ծանրակշիռ է դարձնում նրա վաստակը»: Նա հավելեց՝ «աշխատության մեջ գիտական վերլուծությունները հենվել են բանասիրության վրա, քանզի բանասիրությունը հարստացնում է գիտությունը»:

ՀՀ գրողների միության քարտուղար Պետրոս Դեմիրճյանը «Ֆրանսիացի հայագետներ» (19-20-րդ դարեր) գիրքը համարեց կոթողային, գիտական-հետազոտական լուրջ աշխատանք, որովհետև «գրքում մեկտեղվել են ֆրանսիացի վեց հայագետների աշխատանքներ՝ ոչ միայն ֆրանսերեն առաջաբաններով, հայերեն թարգմանություններով ու հիմնավոր ծանոթագրություններով, այլև հայագետների աշխատությունների՝ ժամանակների բերումով բացթողումներով ու ճշգրտումներով, նաև այլ աղբյուրների հետ համեմատություններով»:

«Իրարամերժ իրադարձությունների մեջ հեղինակը կարողացել է գտնել այն թելը, որը մեզ տանում է դեպի պատմական ճշմարտություն», -ասաց բանասիրական գիտությունների դոկտոր Ալբերտ Մուշեղյանը, իսկ ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը Ա. Դոլուխանյանի գիրքը համարեց եզակի նվեր հայֆրանսիական բարեկամությանը:

Սա «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի յոթերորդ հատորն է: Պ. Դեմիրճյանն անդրադարձավ հատկապես Սեն Մարտենին, ով առաջինն է զբաղվել հայագիտությամբ, ընդգծեց նրա կարևոր հարցադրումները:

Գրքի խմբագիր Անուշավան Զաքարյանը Ա. Դոլուխանյանին համարեց հայագիտության մերօրյա նշանավոր դեմքերից մեկը, իսկ Հայկական հանրագիտարանի տնօրեն Հովհաննես Այվազյանը գիրքը բնորոշեց որպես միջոց՝ հայագիտության զարգացման համար:

«Մեր Նարեկացին 1000 տարի հետո Հռոմի կողմից հռչակվեց տիեզերական վարդապետ՝ Ուսուցիչ, և հիմա կաթոլիկները պարտավոր են հայերեն սովորել, իմանալ հայ միջնադարի գրականությունը»:

Գրքի պատմագիտական և ճանաչողական նշանակության մասին խոսեցին ՀՊՄՀ հայ նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը և ՀՊՄՀ դոցենտ Լիլիթ Հովսեփյանը:

Ֆրանսիացի հայագետները մեր ժողովրդի անցյալի պատմության մասին, սկսած Հայկից և Արշակունիներից, հետաքրքիր ու գիտականորեն հիմնավորված տեղեկություններ են տալիս՝ հասցնելով մինչև մեր օրերը:

Լ. Հովսեփյանը խոսեց գրքի ձեռագրագիտական և աղբյուրագիտական նշանակության մասին:

Այս ամենը մի գրքում ներկայացնելով՝ Ա. Դոլուխանյանը մեծ գործ է արել հայ մշակույթի ու գրականության զարգացման համար»:

Շնորհանդեսն ամփոփվեց պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի ելույթով: Նա նկատեց, որ ֆրանսիացի հայագետների հանդեպ խորաձավալ մոտեցումները, գիտական հետաքրքրությունների ծանրության կենտրոնը արևմտահայ գրամշակութային դաշտից վերադառնում է արևելահայերին, որտեղ առայժմ միակ առաջնորդող պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանն է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

# ԳՊՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Մտորելով մարդու կյանքի ու կենսակերպի մասին՝ հասկանում ես, որ նրան պետք է գնահատել ու հիշել կենդանության օրոք. հատկապես տարեցներին դա կարող է շոյել ու թևեր տալ...

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ասյա ԳՐԻԳՈՐՅԱՆԸ** բոլորեց իր կյանքի ու տասնամյակը: Դպրության և գիտության վաստակաշատ ավիրյալի գիտակցական գործունեության զգալի մասն անցել է հաշատուր Արուսյանի անվան բարձրագույն կրթօջախում, ուր նա արվանական պրպտումների մեջ իր և շատերի համար բացահայտել է գրողի կյանքի, գործի ու մաքառումների բազմաթիվ կողմեր:

Ասյա Գրիգորյանը ուսուցանել է տարբեր սերունդների, նրա ուսանողներից շատերն այսօր դասավանդում են նույն բուհում: Քիչ է ասել, թե նա դասավանդել է մանկավարժության դասընթացներ, նա իր հոգու բարությունն ու մարդկային որակները փոխանցել է ուսանողներին՝ նպաստելով նրանց ներաշխարհի կերտմանը, դաստիարակելով ապագայի լավ քաղաքացիներ:

Ավարտել է Երևանի N44 դպրոցը, 1959-ին ընդունվել Երևանի պետական համալսարան: 1967 թվականից ՀԳՄՀ ընդհանուր մանկավարժության (նախկին-

նում ամբիոնն այդպես էր կոչվում) ամբիոնի դոցենտ է: Պաշտպանել է «Հայ դպրոցը և մանկավարժական միտքը 19-րդ դարի դարից մինչև 1980-ականների վերջը» թեմայով ատենախոսություն:

Նահատակված ու թուրքի յաթաղանից մազապուրծ փրկված ընտանիքի շառավիղներից է, ուն կյանքի ուղին և հարթ չի եղել... Բայց աշխատանքային կենսագրությունը մշտապես միահյուսված է եղել մանկավարժական կրթության և գիտության զարգացման գործընթացներին, որտեղ էլ աշխատել է՝ Քանաքեռի Խ. Աբովյանի տուն-թանգարանի գիտաշխատող-էքսկուրսավար, ԵՊՀ գիտական գրադարանի ընթերցասրահի գրադարանավար, թե Երևանի Ն. Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարանի հայոց լեզվի և մանկավարժության ուսուցչուհի: Նրա կյանքի հարուստ ու հետաքրքիր էջերից են աշխատանքը ՀՀ կրթության նախարարության բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության բաժնում որպես արտահատիքային մեթոդիստ-տեսուչ, իսկ ՀԳՄՀ Մանկավարժական ընկերության ղեկավարման տարիներին երկու անգամ ընտրվել է հանրապետության «Գիտելիք» ընկերության համագումարի պատգամավոր:



Ա. Գրիգորյանի մասնագիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է՝ Հայրենիք-Սփյուռք, արևմտահայ-արևելահայ կապեր ու կրթամշակութային աղբյուրներ, որոնցով էլ պայմանավորված է նրա հասարակական գործունեությունը: Մասնակցել է հանրապետական ու միջազգային մի շարք գիտաժողովների, վարել հաղորդաշարեր, ստացել պարգևներ, որոնցից հատկանշական է Ձորավար Անդրանիկի հուշամեդալը Մխիթարյան միաբանության կողմից և

հաշատուր Արուսյանի հուշամեդալը: Պետք է հավելել, որ 2 գրքի, 80 գիտամեթոդական և շուրջ 35 հրապարակախոսական հոդվածների հեղինակ է, գրել է բանաստեղծություններ ու երգեր, ինքն էլ երբեմն-երբեմն արժանացել բանաստեղծական գնահատանքի, որից մեկը ներկայացնում ենք ստորև.  
Ապրած կյանքիդ տոթակեզ  
Սեր ու բարու մեջ մնաս,  
Յասամանի բույրի պես՝  
Արուսյանով քո անհաս...

## Ստորև ներկայացնում ենք մեր հարցազրույցը Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ ԱՍՅԱ ԼԱԶՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հետ:

**- Պատկանելի տարիքի հեռավորությունից ինչպե՞ս եք գնահատում հարազատ բուհի տարեգրությունը:**

- Բեղմնավոր, հերոսական մաքառումներով լի տարեգրություն՝ արվանաշունչ իր դասերով ու գործընթացներով:

**- Ձեր աշխատանքային կենսագրությունը մեծապես կապված է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ: Այստեղ է Ձեր տարիների տքնանքը, այստեղ եք կրթել բազում սերունդների...**

- Իմ գործունեությունն սկսվել է դեռևս իմ ընտանեկան դպրոցից... Բուհ հրավիրվել են 1967 թվականին և աշխատել մինչև 2015 թվականը: Իմ կենսագրության լավագույն բեղմնավոր պրպտումները՝ գիտական, հասարակական, մշակութաբանական, գոյապահպանական, և արդյունքը այստեղ են մտահղացել... Անշուշտ, իմ գեներտիկական հայեցի, ընտանեկան դաստիարակության բնօրրանից, որի համար հպարտանում եմ:

**- Ի՞նչ կուզեիք պատմել Ձեր մասին:**

- Ասյա Լազրի Գրիգորյան: Ծնվել եմ Երևանում 1937 թվականի հոկտեմբերի 11-ին: Ես՝ բռնադատված ընտանիքի, ստալինյան բռնադատման հետևանքով նահատակված և թուրքական յաթաղանից հրաշքով կենդանի մնացած բեկորների մի հյուլ է: Ծնվել ու մեծացել եմ ծառայողի ընտանիքում, իմ հայրական կողմը Նախիջևանից է, մայրս՝ Վիկտորյան, ծնված Գիլիջանում, բռնադատված Տեր-Ռուբեն քահանայի դուստրն էր:

**- Ովքե՞ր են Ձեր դասախոսները, որոնց երախտապարտ եք մինչև այսօր:**

-Ավարտել եմ ԵՊՀ հայկական բանասիրական ֆակուլտետը: Թող ներեն համալսարանական իմ գործընկերները, ես երախտապարտ եմ իմ համալսարանին, ինձ համար սրբոց սրբություն են եղել իմ բոլոր դասախոսները, պրոֆեսորադասախոսական ողջ կազմը, ցայսօր հպարտանում եմ իմ համալսարանական գործունեությամբ. Էդուարդ Ջրբաշյան, Էդուարդ Աղայան, Հովհաննես Բարսեղյան, Սահակ Բազյան, Ստեփան Մելիք-Բախշյան, Հանազասպ Համբարձումյան, Գեորգ

Բրուտյան, Մկրտիչ Մկրյան, Արամայիս Կարապետյան, Մանվել Ասատրյան, Մելքոն Մելքոնյան և այլք:

**- Որո՞նք են եղել Ձեր ուսումնասիրության ուղղությունները:**

- Հայագիտություն, մանկավարժություն, մշակութաբանություն, հոգեբանություն, (երախտապարտ եմ Էլրա Գրինին, ով ինձ հոգեբանություն է դասախոսել), ցեղասպանագիտություն, նաև խորացել եմ պրակտիկ



քաղաքագիտության մեջ:

**- Ի՞նչ եք դասավանդել Մանկավարժականում:**

- Մանկավարժական տեսություն և պատմություն, հայ դպրոցի պատմություն, գործնական մանկավարժություն:

**- Ձեր արվանագիտական նորույթների մասին ի՞նչ կասեք...**

- Շնորհակալ եմ հարցի համար: Ամենամեծ անակնկալը այս ամռանը հայտնաբերեցի. Պերժ Պոռոշյան-հաշատուր Աբովյան աղբյուրները արվանական դիտակետից որոնումներում, որն ընդգրկում է իմ ոչ միայն արվանական-հայագիտական, մշակութաբանական, այլև լիովին բավարարում է մինչ այժմ իմ բավականին պատկանելի արվանագիտական նորույթներ պարունակող փաստարկները, կապված նաև անհայտացման, մասնավորապես ծառայողական գործունության հետ:

Պոռոշյանի «Մեր Խեչոն» պատմվածքը, որ գրվել է 1892 թվականին, Աբովյանի փաստագրական, վավերագրական առեղծվածի շուրջ, միանգամայն վերջակետ է դնում մինչև այսօր շահարկված, քաղաքականացված, խեղաթյուրված ու մեր ազգային արժանապատվությունը վիրավորած անհայտացման որևէ վարկածի:

Երախտապարտ եմ արվանագիտության բազում երախտավորներին, որոնց հետազոտությունների հետևորդն եմ եղել:

**- Խաշատուր Աբովյանի պատգամներից հատկապես ո՞րն է Ձեր սրտին մոտ, որ ուղեկցում է Ձեզ տարիների ընթացքում:**

-«...ոչ միայն հայերը, այլև ամբողջ Ասիան...ինձ վրա պարտականություն են դնում երբեք չհրաժարվել այն ծառայությունից, որ ես կարող եմ մատուցել»:

Նաև կուզեի հիշել Արշակ Չոպանյանի խոսքը Խ. Աբովյանի մասին. Գրիգոր Նարեկացույն հետ Աբովյան ամենեն զուտ ու հզոր ներկայացուցիչն է հայ գրականության, հայ քնարերգության... Բառական կուտակումը, կրկնությանց, անհագ ընդլայնմանց ձգտումը, զգացման ծայրահեղ ջղայնությունը, բացատրությանց վայրենի ուժգնությունը, կոշտության և փափկության տարօրինակ խառնուրդը, ծանր ու դանդաղ երկարաբանությունը և միանգամայն՝ երբեմն փայլակնահանգույն արագությունն ու փայլը. ահավասիկ ինչ որ կզտնեք Նարեկացիին «Ողբերգության մատյան»-ին և Աբովյանի «Հայրենասերի ողբ»-ին մեջ. երկու ամենեն հայ գրքերը, և որոնցմե միայն պիտի կրնա ծնիլ հայ ճշմարիտ բանաստեղծություն մը:

**- Ի՞նչ կուզեիք ավելացնել...**

- Դեռ 3-րդ դասարանից լրագրությամբ եմ զբաղվել ու քեզ կարող եմ գործընկեր անվանել, և երախտապարտ եմ, որ կրթադաստիարակչական հողվածներով բազմիցս հանդես եմ եկել թերթի էջերում:

**- Ի՞նչ նվիրական երազանք ունեք:**

- Որ իմ նախնիների և ողջ հայ ժողովրդի խաղաղասիրական երազանքներն իրականանան:

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մայրաքաղաքից 250 կմ հեռավորության վրա է գտնվում Տավուշի մարզի Չինարի գյուղը, իսկ շրջակայքում բերրի 30 կմ: Ուրուպատույտ ճանապարհը մեզ բերեց սահմանապահ այս գյուղը, որի դպրոցում իր մանկավարժական (կիրառական) պրակտիկան է անցկացնում բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Կարինե Յովհաննիսյանը: Պրակտիկայի կենտրոնի տնօրեն Վահան Սարգսյանի և վարորդ Արմենի հետ կեսօրին մոտ հասանք Չինարի: Դպրոցի մուտքի մոտ մեզ դիմավորեց գինդել Շահեն Մակարյանը, որը գեներալ Անդրանիկ Մակարյանի եղբայրն է: Դպրոցի գրադարանին նվիրեցինք ֆակուլտետի ամբիոններից տրամադրված 50 կտոր ուսումնամեթոդական գրականություն:



Ուսանողուհին կամավորական սկզբունքով է մեկնել Չինարի՝ տեղում ծանոթանալու գյուղական դպրոցի առօրյային և նյութեր քաղելու ավարտական աշխատանքի վերաբերյալ: Գյուղն ընդունել է ուսանողուհուն, տրամադրել կեցության պայմաններ:

Գյուղի միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում է 94 աշակերտ, անվանակոչված է ազատամարտիկ Վահրամ Սաղոյանի անունով: Տնօրեն Գրետա Դավթյանը ողջունեց ուսանողուհուն այս նախաձեռնությունը և ասաց, որ Կարինեն մայրաքաղաքից մոտ շունչ է բերել իրենց դպրոց: Մի քանի րոպե հետո մեզ միացավ վարչական շրջանի ղեկավար Սամվել Սաղոյանը: Պիտի ներկա լինեինք մեր ուսանողուհու վարձ դասի 7-րդ և 8-րդ երկկազմ դասարանում:

Հայ գրականության դասը սկսված է: Նախ անդրադարձ 7-րդ դասարանցիներին. Դ. Դեմիրճյան. «Ավելորդը» պատմվածքը: Վերջիվերջո ո՞վ էր ավելորդը և ինչո՞ւ... հանձնարարվեց խմբային աշխատանք: Երկկազմ դասարանի դասագործընթացի քայլաշարի անդրադարձը 8-րդ դասարանի թեմային. «Պետրոս Դուրյան»: Ձուգահեռներ Միսաք Մեծարենցին և Սիամանթոյին: Ոգևորվել էր ուսանողուհին. հետաքրքրված էին նաև աշակերտները: Ես նրանց աչքերում լույսի շողեր տեսա. նրանք հավատում էին իրենց ուսուցչուհի-պրակտիկանտի խոսքին: «Հավանո՞ւմ եք ընկեր Կարինեին», - հարցրի: «Այո՛, անկեղծացավ Հակոբը, - լավ է պատմում»:

Կարինեն դասը արդիականացրեց: Մեծ աշխարհի այս անկյունը հայրենի եզերքի ծայրամասն է, իսկ հակառակորդը երբեմն կրակում է: Կրակում է նաև առավոտյան, երբ աշակերտները դպրոց են շտապում... Ամուր է կանգնած իր հողին այս գյուղի բնակիչը՝ մեծը թե փոքրը: Գյուղի տարբեր մասերում լուռ խշշում են չինարու ծառերը: Այս աշակերտների համար իրենց հայրենիքն սկսվում է Չինարի գյուղից:

Պահն օգտագործելով՝ հանդիպեցինք նաև 12-րդ դասարանցիներին: Էլենը և Վարդանը բուհ են դիմելու՝ օտար լեզուների և ինֆորմատիկայի ֆակուլտետներ: Օլյան ապագա բանասեր է: Նրան ներկայացրինք Մանկավարժական համալսարանի ընդունելության կարգը: Այնուհետև վարչական շրջանի ղեկավարի հետ շրջեցինք գյուղի փողոցներով, գլուխ խոնարհեցինք հերոսների շիրիմներին: Մեզ պատմում էր գյուղի պաշտպանական մարտերի մասին: Դրանցից մեկը կոչեց «Փոքր Սարդարապատ», ուր կենաց ու մահու կռիվ է մղվել վասն հայրենյաց: Յուրաքանչյուր հերոսի համար վեր էր խոյացել հիշատակի հուշակոթող:

Արևը ծուլորեն գլորվում էր մայրամուտ, երբ մենք հրաժեշտ տվինք Չինարի գյուղին: Եկող սեպտեմբերից, որտեղ էլ որ աշխատի Կարինե Յովհաննիսյանը, միշտ հիշելու է Չինարի իր աշակերտներին՝ լրջմիտ, ազնիվ ու հայրենասեր:

Աշոտ ԳՆԱՍՅԱՆ

## Ձեռագրապեսականների միասնականացման հարցի շուրջ

ՀՀ ԿԳ նախարարությանը կից գործող Լեզվի կոմիտեի նախաձեռնությամբ Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հոկտեմբերի 8-ին տեղի ունեցավ ՀՀ-ում և ԼՂՀ-ում գործող այբբենարանների ձեռագիր տառատեսակների միօրինակացման-միասնականացման խնդրին նվիրված քննարկում: Հանդիպմանը մասնակցում էին այբբենարանների հեղինակները (Ջ. Գյուլամիրյանը, Լ. Տեր-Գրիգորյանը, Վ. Սարգսյանը), մեթոդիստներ, ուսուցիչներ, տառատեսակներ մշակող-ձևավորողներ՝ տառատեսիկներ (Է. Ղաբուլյանը, Ռ. Թարունյանը), Լեզվի կոմիտեի աշխատակիցներ, մասնագետներ, ովքեր շահագրգիռ էին՝ քննարկելու երկար տարիներ լուծման կարիք ունեցող այդ հարցը: Ազդակը Գեղարվեստի ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետի դասախոս, տառատեսիկ Էդիկ Ղաբուլյանի առաջարկությունն էր:

Անառարկելի է, որ օրեցօր ավելանում են հայերենի տպագիր տառատեսակները՝ նորանոր ու ինքնատիպ ձևավորումներ ստանալով: Հայերենի ձեռագիրը ավելի քան հազար հինգ հարյուր տարվա պատմություն ունի: Անցած հարյուրամյակների ընթացքում այն նորանոր ձևեր ընդունելով ու փոփոխվելով՝ այսօր ունի բազմաթիվ ու բազմապիսի տեսակներ: Եվ այնուհանդերձ, մեր ձեռագիրը փոփոխման ու կատարելագործման իր ներթափանցուն հնարավորությունները դեռ չի սպառել: Այս խնդիրն այսօր հատկապես կարևորվում է՝ նկատի ունենալով ոչ միայն տառատեսակների հարստացումը, այլև տարրական դպրոցում, մասնավորապես՝ առաջին դասարանում սովորողների ձեռագրի ձևավորման և կարգալու կարողության զարգացման հարցերը:

Մեր տպագիր ու ձեռագիր տառատեսակները մանկավարժական, հոգեբանական և առողջապահական տեսանկյուններից առաջին անգամ լուրջ քննարկման նյութ է դարձրել պրոֆեսոր Գ. Էդիկյանը: Հետագայում այդ հարցով զբաղվել են Գ. Սևակը, Ա. Տեր-Գրիգորյանը և այլք: Հայերեն վայելչագրական ու գեղագրական բազմաթիվ ձեռագրատեսակներից առանձնացված դպրոցական ձեռագրատեսակը ևս ժամանակի ընթացքում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների: Դրանք մշակելիս մեր վայելչագիրները հաշվի են առել ինչպես գրելիս, այնպես էլ ընթերցելիս ծագող դժվարությունների հաղթահարման մանկավարժական-մեթոդական պահանջները, որոնք ձեռագրի կենսունակության ու որակի հիմնական չափանիշներն են: Եվ այսօր գործածության մեջ շրջանառվող դպրոցական ձեռագրատեսակը (որոշ տառերի տարբերակների առկայությամբ հանդերձ) թե՛ ձևավորման պարզությամբ ու մատչելիությամբ, թե՛ ընթերցելիությամբ ու գեղեցկությամբ հիմնականում համապատասխանում են դպրոցական տառատեսակին առաջադրվող պահանջներին:

Քննարկման ընթացքում ելույթ ունեցողները մշեցին, որ ձեռագիր տառատեսակների մշակման ժամանակ անհրաժեշտ է կարևոր է նկատի ունենալ դրանց ուսուցման առանձնահատկություններն ու դժվարությունները: Վերջին տասնամյակներում հայերեն դպրոցական ձեռագրատեսակի մշակման աշխատանքներն ընթացել են դժվարությունների հաղթահարման երեք հիմնական ուղղություններով՝ ա) ձեռագիր մեծատառերի ձևավորման պարզեցման, բ) ձեռագիր և տպագիր մեծատառերի տառապատկերների մոտեցման, գ) ձեռագիր մեծատառերի և փոքրատառերի տառապատկերների մոտեցման: Այդ փոփոխությունների ու մշակման արդյունքում ձևավորված ձեռագրատեսակը՝ եզակի բացառություններով, քննություն է բռնել: Սակայն գործածության մեջ դրված դպրոցական ձեռագրատեսակների տարբեր լրակազմերում առկա են որոշ մեծատառերի զուգաձևություններ (Շ, Ջ, Պ, Տ), որոնք ցանկալի է միօրինակացնել-միասնականացնել գործող բոլոր այբբենարաններում և տարրական դասարանների բոլոր գրատետրերում: Թերևս անհրաժեշտ է վերանայել նաև մի քանի այլ մեծատառերի ու փոքրատառերի տառապատկերների պարզեցման հարցը:

Տառաձևերի տարբերությունները դասագրքերում պայմանավորված են առավելապես տարբեր հրատարակչություններում կիրառվող դպրոցական տառատեսակի տարբեր լրակազմերով: Բացի դրանից՝ դպրոցական ձեռագրատեսակի գործածվող լրակազմերը բավականին անորակ են. ոչ միայն հստակ չեն, այլև շատ անփույթ ու անհամաչափ են գրված, պահպանված չեն հայերեն տառերի համաչափությունը, խորը մասնիկների ուղղական թեքությունը և այլն: Այս ամենի հետևանքով ոչ միայն խախտված է տառապատկերի ճշգրտությունը, այլև համակարգչային մեր դարում տառերի բերված օրինակները հեռու են վայելչագրական կատարյալ նմուշ լինելուց: Այս բացթողումները նաև առողջական տեսողական խնդիրներ կարող են առաջացնել: Հետևաբար միասնական կատարյալ տառատեսակի ստեղծումը ոչ միայն արդիական է, այլև անհրաժեշտություն: Այնուհանդերձ, տառատեսակների և հատկապես դպրոցական տառատեսակի կտրուկ, հաճախակի ու անհարկի փոփոխությունները ցանկալի չեն, ուստի ձեռագրային միասնական տառատեսակի ընտրությունը պետք է արդարացված և առավելագույնս հիմնավորված լինի ուսուցողական և գեղագիտական տեսանկյուններից:

Ամփոփելով քննարկումը՝ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը մշեց, որ առաջիկայում կկազմակերպվի մասնագիտական խորհրդակցությունների շարք՝ արժարժեքավոր քննարկելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար:

Լ. Ա. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

## Ըովիկ Զարիսյան. «Սուլամիթա. Սևակի մեծ սերը»

ըն, ստեղծագործական բուռն և դժվարին ընթացքը, ինչպես նաև մի քանի բացահայտում, որ, դժբախտաբար, վեպը տպագրելուց հետո էր կատարել:

Շատ տարիներ անց, երկար որոնում-

ների արդյունքում, հեղինակը գտնում է փոստատան աշխատակիցներից մեկին: Այն փոստատան, որտեղից գրեթե ամեն օր Պ. Սևակը նամակ էր ուղարկում Սու-



լամիթային: Աշխատակցուհին շատ արժեքավոր տեղեկություններ է ներկայացնում և անկեղծորեն խոստովանում է, որ ժամանակին իրեն խիստ հետաքրքրել են այդ նամակները, և միայն գաղտնի ընթերցելուց հետո է ինքը դրանք ուղարկել հասցեատիրոջը: Օրերից մեկ օր Պ. Սևակը փոստատան է բերում մի ձայներիկ: Ինչպես արդեն կռահեցիք, ձայնագրությունը անպատճառ պիտի լսվեր: Երեկոյան՝ ձայնագրությունը ըմբռնելիս, փոստատան աշխատակցուհու ամուսինը պատահաբար ներս է մտնում և խանդից ու զայրության զազազած, մտածելով, որ ինչ-որ մեկն իր կնոջն է սեր խոստովանում, կտրում է այն: Ահա և չարդարացված հետաքրքրասիրություն, որ մի մեծ կորստի պատճառ է դառնում:

Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում, եղան բացահայտումներ և անակնկալներ: Հեղինակը բացեց շատ գաղտնիքներ, խոսեց նաև առաջիկա վեպի և անելիքների մասին:

Արմեն ՄԻՒԹԱՐՅԱՆ

Սկզբնական կրթության ֆակուլտետում Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ հոկտեմբերի 9-ին տեղի ունեցավ հեթանոսական «Վարպետաց դասը», որը վարում էր գրող, գրականագետ Հովիկ Զարիսյանը: Քննարկման թեման Հովիկ Զարիսյանի «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» փաստագրական վեպն էր՝ Պարույր Սևակի և Սուլամիթա Ռուզմիկի սամակամին: Հեղինակը յուրահատուկ հնարանքով և հյուսվածքով նամակամին բարձրացրել է գեղարվեստի աստիճան՝ դարձնելով վեպ: Այս երևույթը բացառիկ է ինչպես հայ, այնպես էլ ռուս և արտասահմանյան գրականության պարագայում:

«Հայոց լեզու և գրականություն» առարկայի շրջանակներում լեզվական նյութերն ուսումնասիրվում են գրական տեքստերի միջոցով: Այս անգամ գործնական գրություններից նամակի ուսումնասիրումը կատարվեց ոչ սովորական մանակների միջոցով:

Հանդիպման ընթացքում հեղինակը ներկայացրեց վեպի նախապատմություն-

# Այցելություն Ավերյաց Երկիր

(Սկիզբը նախորդ համարում)

Ահա Արածանի գետն է, որի վրա է կառուցված Սուլուխի կամուրջը: Գիշտ այդ գետի ջրերում են դավադիր կերպով սպանել Պետրոս Զառչին: Նրա դին գինակիցները փախցրել են թուրքի ձեռքից և գաղտնի թաղել Մուշում, անհայտ մի վայրում, որ թուրքերը չգտնեն, չպղծեն:

Մթնշաղին հասանք Մուշ քաղաք: Ուղեկցող խմբավարը մեզ տարավ Մուշի հայկական թաղամաս, ցույց տվեց քաղաքի կենտրոնական մասում սուրբ Մարինե եկեղեցու ավերակները: Հարևանությամբ ապրողները մեր ծայները լսելով դուրս եկան տնից. չաղաքները տակից խոսում ու ցույց էին տալիս մեզ: Հետո իմացանք, որ նրանք միակ ծայտված հայերն են: Հայկական պահպանված ոչ մի այլ բան չկար...

Գիշերեցինք Մուշում: Առավոտյան ճանապարհը տանում է մեզ Բինգոլ, Սասնա լեռներով, Տիգրիս գետի ափով գնում ենք Դիարբեքիր: Մեծ, զարգացած, գեղեցիկ քաղաք էր Դիարբեքիրը: Այս քաղաքում է գտնվում սուրբ Կիրակոս եկեղեցին: Եղեփա, Ուրֆա, անցնում ենք Այնթապ քաղաքի կողքով: Իհարկե այս քաղաքների տեղանունները փոխված էին, և խմբավարը ուղղակի նշում էր մեզ հանդիպած վայրերի հին հայկական անունները: Չենք կանգնում. ոչ մի հայկական հետք: Տավրոսյան լեռների երկար թունելը Մեծ Հայքը բաժանում է Կիլիկիայից: Ահա Ադանան, Արևմտյան Հայաստանի ամենահարուստ քաղաքը, և հենց այդ հարստությանը տիրանալու համար էր, որ թուրքերը հայոց ցեղասպանությունը սկսեցին Ադանայից... Այսօր այն բնակեցված է թուրքերով և ունի մոտ 3 միլիոն բնակչություն:

Մեկնում ենք Կիլիկիա, Միջերկրական ծովի ափ: Տեսնելու էինք հայերի հնագույն, գրեթե լեգենդար երազանքը, հեքիաթը... Անընդհատ մտածում էի՝ աջից են տեսնելու ծովը, թե՛ ձախից...

Կիլիկյան բաժանվում է 3 մասի՝ դաշտային, լեռնային, ցամաքային: Լևոն II -ի օրոք Կիլիկյան Հայաստանը Սիս մայրաքաղաքով ծաղկունք էր ապրում, բուն կերպով զարգանում էին առևտուրը, ար-

հեստները: Հայերը տարածաշրջանում աչքի էին ընկնում իրենց զարգացվածությամբ հարստությամբ, ապրելակերպով, սոցիալական դիրքով և կազմակերպվածությամբ: Պատմությունը շատ քիչ տեղեկություն է մեզ փոխանցում Կիլիկյան Հայաստանի ժամանակներից, միայն այն, որ Կիլիկյան Հայաստանը կործանվեց կրոնական պառակտումների հետևանքով:

Հետմիջոցներին արդեն Կոռնիկոսի ծովափին էինք: Ջուրը հրաշք էր՝ մեղմ ալիքներն ու տաք ջուրը ավելացնում էին վայելքը: Ափը լի էր ամբողջ մարմինը լողազգեստով ծածկած մուսուլմանուհիներով, որոնց ներկայությունը հետո տանելի էր և հասկանալի: Վաղ առավոտյան ժամը 4-5-ի հատվածում ծովի ծիփանքի ծայրը խլացնում էր ազանի ծայրը, որը կրկնվում էր 4 ժամը մեկ ու արդթի կանչում հավատացյալներին: Ցերեկվա ժամերին ափով մեկ ձգված սրճարաններից հնչող բարձր, ռիթմիկ երաժշտությունը անլսելի էր դարձնում արդթի կանչող ծայրը: Այդպես էլ չտեսանք արդթողների:

Ծովում լողալիս հեռահար շփվում, ծուլվում էինք Կիլիկիայի ծովային հրաշք բերդին Ակնթաթը պահելով իր տեղում... Բերդը գտնվում էր ափից 800 մետր հեռավորության վրա, լավ լողորդները հեշտությամբ են հաղթահարում հեռավորությունը, որը նրանց պարծենալու առիթ էր տալիս հատկապես լողալ չիմացողներին մոտ: Լողալ չիմացողներին ավելի մատչելի էր Կիլիկիայի ցամաքային բերդը, որը, ի տարբերություն ծովային բերդի, ավելի անխնամ ու ավերված էր: Ռազմավարական տեսակետից անթերի էր կառուցված ծովային բերդը: Բերդի անառիկությունը ապահովվում էին արևմուտքից և արևելքից կառուցված դիտակետերը: Սկզբում կառուցվել է ցամաքը ծովային բերդին միացնող քարե պատ, որը հնարավոր էր քայլելով ափից հասնել բերդ, սակայն հետագայում անվտանգությունից ելնելով այն քանդել են: Ծովային բերդը կառուցել են հույները, նրանցից գրավել են հռոմեացիները, մամլուկները, վերջիններից՝ հայերը, իսկ այժմ բերդը թուրքերինն է:

Մեկնում ենք Մերսին և Տարսոն մավահանգստային քաղաքներ: Քաղաքները տեսքով եվրոպական էին, և փողոցներում քիչ հանդիպեցինք չաղաքով կանանց: Տարսոն քաղաքը հայտնի է հռոմեական կամարով, որտեղ առաջին անգամ հանդիպել են Կլեոպատրան և Անտոնինոսը: Այս քաղաքում է ծնվել Հիսուս Քրիստոսի աշակերտ Պողոս առաքյալը, և իր անվան մզկիթի վերածված եկեղեցուն է օծվել Լևոն արքան: Պահպանված էր Պողոս առաքյալի տունը, բակում կար սառնորակ և առողջաբեր ջրիոր, որից ջուր խմեցինք և էլ ավելի առողջացանք մեզ մենք: Կիլիկիայի Սիս մայրաքաղաքում հայկական հետք չի պահպանվել: Լևոնի բերդը՝ հզոր, անառիկ պարիսպներով, անհաղթահարելի և անկրկնելի գեղեցիկ տեսք ուներ: Հաստ պատերն ու մագլցելու անհնարիությունը ապահովել է բերդի անվտանգությունը: Խմբից անվախ, տոկուն ու դիմացկուն տղաները դժվարությամբ, սակայն հաղթահարեցին անառիկ բերդի բարդություններն ու վայելեցին բերդի բարձունքի համայնապատկերը: Լևոնի բերդը 14-րդ դարից հետո անցնում է Եգիպտոսի սուլթանությանը, այժմ պատկանում է Թուրքական պետությանը:

Կապադոկիա: Այն շատ հին քաղաք է, այստեղով է անցել Ալեքսանդր Մակեդոնացին: Քաղաքի անվանը կարելի է հանդիպել մեզ Աստվածաշնչում: Կապադոկիայի սրածայր սնկաձև ժայռերը առաջացել են տարիներ շարունակ այս կողմերում ուժեղ քամիների, հողմերի ու անձրևների հետևանքով: Քաղաքում կան երկու հազար տարվա ստորգետնյա քաղաքներ, գետնափոր ու ստորգետնյա եկեղեցիներ: Ստորգետնյա եկեղեցիներում են գաղտնի հավաքվել ու քրիստոնեությունը քարոզել կույսերը: Հետագայում բաժանվելով աշխարհի չորս կողմերով՝ նրանք հետապնդվել, նահատակվել և սրբացել են: Այս վայրում է Գրիգոր Լուսավորիչը սովորել քրիստոնեությունը քարոզել:

Կեսարիան հարուստ է բազմաթիվ օգտակար հանածոներով և ունի զարգացած ծանր արդյունաբերություն: Կեսա-

րիայում է ծնվել ազգությամբ պարթև Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, ով հետագայում մեկնում է Կապադոկիա՝ ուսումնասիրելու քրիստոնեությունը: Հետագայում Գրիգոր Լուսավորիչն է հայերին մկրտում Արածանի գետում: Կեսարիայի միակ հայկական Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին խնամում էր Կարապետ Ստեփանյանի երեք հոգանոց ընտանիքը: Եկեղեցին գործում է, այսինքն պատարագ է մատուցվում հազվադեպ, միայն երբ Պոլսի պատրիարքարանից քահանա են ուղարկում: Նրանք հայերեն չէին խոսում, բայց հասկանում էին մեզ: Կարապետը շատ հուզված էր և հազիվ էր զսպում արցունքները: Ես ինձ հետ խունկ էի վերցրել՝ նպատակ ունենալով հայկական որևէ եկեղեցուն վառել: Երբ հարցրեցի՝ կարո՞ղ ենք խնկարկել, ասաց, որ բուրվառ ունի, բայց ածուխ չկա: Մեկ վայրկյան անց վանքի տարածքից հավաքվեց մեծ քանակությամբ փայտ, վառեցինք և խնկարկեցինք եկեղեցին, արդթեցինք Կարապետի հետ միասին: Նա վաղուց սպասում էր մեզ մի առիթի...

Ճանապարհը շարունակում ենք դեպի Սեբաստիա. Սըվազյան գտնվում էր ծովի մակերևույթից 2190 մետր բարձրության վրա: Ամասիայից երգնկա աջակողմյան ուղղությամբ՝ Դերսիմի լեռների երկայնքով հոսում էր Եփրատը: 1960 թվականի երկրաշարժն ամբողջությամբ ավերել էր Երգնկան, մակայն տեսանք լիովին վերականգնված և բոլորովին նոր քաղաք՝ օդային կամուրջներով: Հասնում ենք Երգնկայի եռահարկ Գիրլեվիթի ջրվեժներին: Անզուգական գեղեցկություն էր, առատ ջրային զանգվածն անասելի հզորությամբ թափվում էր ներքև... Հասնում ենք Սամասարյան վարժարան, որը հիմնվել է 1881 թվականին: Այստեղ երեխաները սովորել են գրաբար, տաճկերեն, աշխարհագրություն, օտար լեզուներ, տրամաբանություն և այլ առարկաներ: 1915 թվականին ուսուցիչների մեծ մասը նահատակվել է, իսկ վարժարանն ավերվել: Այս շենքը միակն է, որ պահպանվել է հայերի հեռանալուց հետո:

Մեզ համար Արևմտյան Հայաստանը եղել է և կա երազանքի, անկրկնելի գեղեցիկ հովիտների և վեհ լեռների երկիր: Դժվար էր համակերպվել կորցրածի հետ...

Փայանե ՄՈՒՐԱՂՅԱՆ  
19 օգոստոսի, 2018 թվական

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏ-100



Մանյա ԲԵԾԺԵԼՅԱՆ  
(Սկիզբը նախորդ համարում)

22 Մայիս 1918-ին կատաղի պատերազմը սկսա, խիզախ ֆետայիները յարձակեցան ու ամեն կողմէն մոսիմներու, մեթոյոգներու եւ թնդանօթներու կրակ կը տեղար, կրակ մը, որ երկինքէն իջած ձիւնը նոյնիսկ չէր կրնար մարել:

Խաչիկի կողքին էին Արմուրտանցի եղբայրներ Նազար եւ Լուսֆիլ Ալպակեան զինակիցները, ապա անոնց միացան երեւանցի Ջատիկն ու Յովհաննէս Քրիստափոր Բաղրամեանը: Հայկական

# Միայն վերստ կայ Հայոց փրկութիւն

զինեալ ուժերու քաջերը իրենց դիրքերն ամուր պահեցին:

Կռիւի ընթացքին խաչիկը վիրաւորուեցաւ ու ձախ ուսի վրայ կրեց առաջին շքանշան փամփուշտը, ընկերները տեղւոյն վրայ վերքը կապեցին, պատերազմը կը շարունակուէր, հայոց արիւները առաջ կ'երթային, ջոկատի տղաքը յստակ կը լսէին Հասան Փաշաեանին, որ կը բացազանչէր «զարկէ տղաք մի խնայէ երբէք, զարկէ մեր վերքերուն խորութեան չափ»:

Նոյն ատեն Բաբերցի ընկեր Խորենը սկսաւ երգել՝ «Մեր հայրենիք թշուառ, անտէր, մեր թշնամեաց ոտնակոխ, Իւր որդիքը արդ կանչում են, Հանել Իւր վրէժ, քէն ու դի: Դու սուրբ արիւնով պիտի լինես ազատուած»:

Հայոց քաջարի որդիները շարունակեցին յառաջանալ, խաչիկը վիրաւոր էր, բայց կռուի վայրը չէր լքած, ան փոսի մէջ 6 զինեալ թուրքեր տեսած էր, իսկոյն ծայրէն ընկեր Ջատիկին եւ Խորենին, անոնք անմիջապէս պաշարեցին թուրքերը, եւ խաչիկը թուրքերէնով գորաց՝ ըսելով ձեր զէնքերը նետեցէք ու յանձնուեցէք:

Ձինեալներն այլընտրանք չունէին, ձեռքերնին վեր դուրս եկան, ընկեր Խորենը մօտեցաւ իրենց, խուզարկեց, մէջ-

քերնուն ատրճանակները, կացիններն ու զէնքերը մէկ կողմ դրաւ, ընկեր Յովհաննէս Քրիստափորը ձեռքերնին ետեւ կապեց, իսկ հրամանատար Հասան Փաշաեանը հրամայեց գերիները տանիլ հարցաքննելու:

Հրամանատար Փաշաեանի աչքին ինկաւ արիւնոտ զինուոր խաչիկի հագուստը, իսկոյն ձայն տուաւ փրկարարներուն, անոնք եկան ու վերքը մշակելու սկսան, բժիշկն ըսաւ հիւանդանոց պէտք է երթայ, խաչիկը չի համաձայնելով, ընկեր Փաշաեանին ըսաւ. «Ես եկայ մեռնելու, ոչ թե հետ դառնալու»:

Հրամանատարը պահ մը կեցաւ, ապա մօտեցաւ ու անոր համբուրեց, այդ պահին ընկեր Յովհաննէս Քրիստափորը մօտեցաւ խաչիկին ու ըսաւ անոր. «Անունդ Կավոռը կոչեցի, յիսնապետ Կավոռը»: այնուհետեւ բոլորը խաչիկին Կավոռը կը կանչէին:

Թշնամին վախէն հետ քաշուած էր, ձայն չկար: Հայ կտորիճները ձիերուն բարձրացան եւ անցան առաջ, հասան նախապէս որոշուած կէտին՝ Սոսէի ծառին, որուն շուրջը յափշտակուած թշնամիի դիակներն եւ ամոնց զէնքերն ու ռազմամթերքները ցիրուցան սփռուած

էին: Հերոսներն իրենց յաղթանակով հպարտ, հաւաքեցին զէնքերը եւ ձիերու խուրջերը լեցուցին ու տարին բանակավայր:

28 Մայիս 1918-ին էր երբ ընկեր Փաշաեանի ձիւն կը սուրար ու հրամանատարն ուրախ կը յայտարարէր, որ Հայաստանը դարձաւ ազատ անկախ Պետութիւն: Մարտիկներու կեցցէներով ու հունաներով երկինք երկիր դողդաջ:

Անի քաղաքի կործանումէն վերջ Հայերը դժբախտութիւն ապրեցան, սակայն երբ ֆետային կամ մահ կամ ազատութիւն ըսելով զէնքը ձեռքը առաւ, թշնամին լաց ու կոծի մէջ ինկաւ, Սարդարապատի պատերազմով թուրքը ստիպուած եղաւ փախչիլ, տասնեակ հարիւրաւոր դիակներ եւ պատերազմական զանազան տեսակի զէնքեր, թնդանօթներ, մեթոյոգներ, թոմեկաններ ու սնտուկներով փամփուշտ թողնելով:

Հայկական պատուական եռագոյնը ծածանեցաւ Հայաստանի Հանրապետութեան ազատ երկնքի տակ, հայ ֆիտային դարձաւ արդէն հայկական բանակի զինուոր, տապալեց Օսմանեան «եղբորըմի» (թրք. փառապետ) ոչնչացման ծրագիրը:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ



ՀՊՄՀ «Սփյուռք» գիտատնտեսական կենտրոնը 2012 թվականից ձեռնամուխ է եղել լիբանանահայ նշանավոր արձակագիր, քննադատ և հրապարակախոս Գևորգ Աճեմյանի հայագիր ամբողջական ժառանգության լույսընծայմանը: Առաջին երեք հատորներում ամփոփված են նրա լավագույն արձակ գործերը՝ պատմվածքներ, վիպակներ և վեպեր:

Վերջերս լույս տեսան հեղինակի նաև չորրորդ և հինգերորդ հատորները՝ «Քննադատական երկեր» և «Հրապարակագրական երկեր» խորագրերով՝ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի և Քնարիկ Աբրահամյանի առաջաբանով ու խմբագրությամբ:

Լիբանանահայ արձակագրի տեսաբանական եզրահանգումները, գրականագիտական վերլուծումներն ու գրախոսականները այսօր էլ շատ ու շատ հարցադրումներում կարող են կողմնորոշիչ լինել հայրենի և սփյուռքահայ գրականագետների համար. տասնամյակների հոլովություն շարունակում են պահել իրենց արդիականության դրոշմը: Իսկ քաղաքական դատողություններն ու վերլուծումները գալիս են ամբողջացնելու քաղաքագետ Աճեմյանի նուրբ դիտողականությունն ու ազգային խնդիրների նկատմամբ մտավորականի խոր պատասխանատվությունը:


Չորրորդ հատորում տեղ են գտել առանձին գրքերով հրատարակված ուսումնասիրությունները և մամուլից հանած գործերը, որոնք, հավատարիմ հեղինակային նախընտրության, բաժանված են հետևյալ խորագրերի՝ «Գրադատություն», «Հարցազրույցներ» և «Նամակատուփ»:

Հինգերորդ հատորում տեղ են գտել հետևյալ գրքերը՝ «Միակ լուծումը», «Պիտի յիշե՛մք երբեւիցե Արեւմտեան Հայաստանը», «Քաղաքական իրապաշտութի՛ւն թէ անձնատուութեան պատրաստականութիւն», ինչպես նաև մամուլից հանված հոդվածները:

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՅԱՆՁՈՎ

Հայտնի ճշմարտություն է, որ հայ մարդու ազգային դիմագծի, հոգեբանության, պատմական հիշողության ու անցած ճանապարհի ամենախոսուն վկայությունը մայրենի լեզուն է: Այն պահպանելն ու պաշտպանելը եղել և մնում է յուրաքանչյուր հայի սրբազան պարտքը: Ուստի մայրենի, հետևապես և ազգային լեզվամտածողության ձևավորմանն ու զարգացմանը միտված ձեռնարկումները արժանի են միայն խրախուսանքի և գնահատության:

Օրերս ավագ դպրոցի աշակերտների և բուհերի հունամիտար ֆակուլտետների ուսանողների սեղանին դրվեց Լատիա Ավագյանի և Լիլիթ Տեր-Գրիգորյանի համահեղինակությամբ կազմված «Աշխատանք բնագրի շուրջ» ուսումնական ձեռնարկը: Այն աչքի է ընկնում բովանդակային բազմազանությամբ և տրամաբանական կառուցվածքով:



Հեղինակները մեծազույն խմանքով և պատասխանատվությամբ են ընտրել բնագրային նյութերը, դրանց շուրջ առաջարկել հայոց լեզվի բոլոր բաժիններին առնչվող բազմազան առաջադրանքներ, որոնք նպատակաուղղված են սովորողների ոչ միայն խոսքի զարգացմանը, լեզվագիտական-լեզվաոճական կարողությունների մշակմանն ու խորացմանը:

մանր, այլև զեղարվեստական մտածողության և արժեքային համակարգի ձևավորմանը: Գրքում ներառված ստեղծագործությունների (կամ դրանցից բերված հատվածների) միջոցով և՛ աշակերտները, և՛ ուսանողները ձեռք կբերեն լեզվական հմտություններ՝ հընթաց ծանոթանալով հայ և օտարազգի համրաճանաչ հեղինակներին, նրանց ստեղծագործական աշխարհի մեկ-երկու նրբերանգների:


«Աշխատանք բնագրի շուրջ» ուսումնական ձեռնարկը իր տեսակի մեջ բավարարում է ժամանակի կրթական նոր պահանջները և միանգամայն նպատակային կարող է կիրառվել բոլոր նրանց կողմից, ովքեր սիրում են մայրենին և նախանձախնդիր են լեզվի պահպանմանն ու զարգացման գործուն:

Եվա ՄԱՅԱՎԱՆՅԱՆ  
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խ. Արվյանի անվան ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի կողմից հրատարակության է երաշխավորվել Մարինե Միքայելյանի «ՀՊԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ» ուսումնամեթոդական ձեռնարկը

Ձեռնարկում ներկայացված են հոգեբանամանկավարժական գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանությունը, ինչպես նաև հետազոտության պլանավորման և իրականացման տրամաբանությունը, հետազոտության տեսական և փորձարարական մեթոդները, դիտման, գիտափորձի, հարցման, թեստավորման, հետազոտական տվյալների մշակման մեթոդների տարատեսակներն ու կիրառման առանձնահատկությունները: Պարզաբանվում են գիտական աշխատանքի ձևակերպմանը, գրախոսմանը և պաշտպանությանը ներկայացվող պահանջները, գիտական հարդորումների ձևերը:

Ձեռնարկը հասցեագրված է հոգեբանի և մանկավարժի մասնագիտացում ստացող ուսանողներին, մագիստրանտներին, հոգեբանության և մանկավարժության ամբիոնների հայցորդներին, ասպիրանտներին, դասախոսներին, կրթական ոլորտում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնող մանկավարժներին:



Մարինե Միքայելյան

Միայն վերքով կայ Հայոց փրկութիւն

7 Պատերազմն աւարտուեցաւ, իսկ Կավրոշը երջանկութիւնէն վերջը մոռցաւ, սակայն Երեւանէն եկած բժիշկները, երբ տեսան Կավրոշի վերքը, որոշեցին անոր Երեւանի հիւանդանոցը փոխադրեն, ջոկատի հրամանատար Հասան Փաշաեանը վիճակի լրջութիւնը իմանալով յանձնարարեց ընկեր Ջատիկին, որ Կավրոշի հետ երթայ ու խնամէ անոր:

Երբ հերոսները հասան Երեւան՝ տեսան քաղաքի բոլոր թաղերը, տունները, շուկաները, խանութները, մարդիկ մեծով պզտիկով ուրախ կ'երգէին ու կը պարէին, իրար շնորհաւորելով յաղթանակի կենացը կը խմէին, ամենուրեք կը հնչէր ազգային երգեր: Քաջերուն ժամանումը եւս մէկ խիճն ստեղծեց ու քէֆը խնճոյքը շարունակուեցաւ մինչեւ լոյս:

Առաւօտին հասան հիւանդանոց, քիչ անց հասաւ նաեւ հրամանատար Փաշաեանը, ով բժախնդիր կը հետեւէր իր գիւնուորի առողջութեան մասին: Կավրոշը, որպէս պատերազմի վիրաւոր, շարք մը այցելուներ ունեցած էր, որոնցմէ էր Յովհաննէս Քրիստափոր Բաղրամեանը, ան իր ջերմ ժպիտով շուտափոյթ ապաքինում մաղթեց ու ճակատը համբուրելով ըսաւ. «Կիսատ գործը պիտի աւարտենք, պիտի ազատագրենք մեր մնացած սուրբ հողերը»:

Մի քանի օր անց, երբ գիւնուորի առողջական վիճակը կայունացաւ, գլխաւոր բժիշկ Կարօն արտօնեց անոր ժամանակաւոր հիւանդանոցէն դուրս գալ: Ուստի

հրամանատարն ու զինակիցները Կավրոշին տուին հայկական բանակի զինուորական տարազը, եւ բոլորը միասին ուղևեցան Երեւանի մէջ հրամանատարներու կեդրոնը, ուր ներկայ էին զօրավար Սիլիկեանը, զօրավար Նազարբեկեանը, հերոս Արամ Մանուկեանը: Վերջինին հրամանատար Փաշաեանը ներկայացուց՝ քաջարի յիսնամեայ Կավրոշը:

Կավրոշի տրամադրութիւնը շատ բարձր էր, իսկ առողջութիւնը վատ, ան ստիպուած վերադարձաւ հիւանդանոց, այս անգամ բժիշկը քննեց ու յայտնեց, որ վերջը բորբոքած է ու պէտք է ձախ թելը կտրուի:

Կավրոշը սրտաճնլիկ դուրս ելաւ: Չատիկը հետեւեցաւ անոր եւ երկուսով գացին Ջատիկի ծնողքին տունը, ան իր մօր բացատրեց ցաւոտ իրավիճակը: Հայուհի մայրիկն ըսաւ. «Մի մտածէր, ամհոգ եղիր, լաւ կ'ըլլայ որդիս»: Ճաշէն յետոյ մայրիկը ժողովրդական միջոցներով՝ իւղով, զիհիով վերջը մշակեց եւ ցաւէն տառապած զինուորին համազօրութեան համար ոչ մէկ հնարաւորութիւն չի խնայեց:

Կավրոշը ժամանակ մը յետոյ վերադարձաւ բանակ, այստեղ ընկեր Արամ Մանուկեանն իր մօտ կանչեց անոր ու յայտարարեց, որ այսուհետ ան ընտրուած է՝ Ներքին Գործոց Նախարարի տիտղոսը ստանձնած Մանուկեանի թիկնապահի պաշտօնը կատարելու:

Երկու տարի անց, 14 հոկտեմբեր, 1920 թուականին Խորհրդային Ռուսաստանի ղեկավարութիւնը որոշում ընդունեց

Հայաստանը խորհրդայնացնելու մասին եւ պայմանագիրը ստորագրուեցաւ 2 դեկտեմբեր 1920-ին, ապա Կոմունիստական հալածանքը սկսաւ ընդդէմ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ինչը մղեց Կավրոշը ընկերներով 1921 թուականին ճամբայ ինան դէպի Պարսկաստան, յետոյ անցան Իրաք, ապա Տէր Ջօր, ուրկէ անցան Հալէպ:

Հալէպ հասնելով՝ Կավրոշը կուսակցութիւնէն հրահանգ կը ստանայ երթալ Դամասկոս, 10 օր ճամբորդութիւնէն յետոյ կը հասնի, քիչ ժամանակ անց, ապրելու հարմար պայմաններ գտնելու եւ աշխատելու համար կ'երթայ Լիբանան եւ Ջահլի մէջ կը ծանօթանայ Փառանձեմին, այն հայուհին որ ծնած էր Կարին-Երզրում 1905 թուականին, Ջօրաւար Անդրանիկի խումբէն՝ Բարակցի Կարօյի աղջիկը, ծնողները նահատակուելէն վերջ ինք մնացեր էր Դազերի որբանոցը: Անուսնանալով ընտանիք կը կազմեն ու կը հաստատուին Դամասկոս:

Կավրոշը Սուրիական բանակի մէջ կաշխատի ու կը դառնա վերակացու:

Կավրոշի պատուական պատմութիւնն իր զաւակի Անդրանիկի հպարտութիւնն է, անէնօրեայ հացի պէս իր մէջ սերմանուած ազգասիրական բարձր ոգին, անոր ուղեցոյց եղաւ պարկեշտ կեանք մը ապրելու: «Այսօր հայ զինուորի յիշատակի առաջ խնամարիւնով՝ ներկային հայոց բանակի զինուորներուն համար գիշեր ցերեկ կ'աղօթեն, որ Յիսուս Քրիստոս ըլլայ ձեզի օգնական, որպէսզի հայոց եր-



Կիրը պահեք միշտ յաղթական» կ'ըսէ Անդրանիկ Գազանձեանը:

Իսկ եւս կը խոնարհուիմ Ձեր առաջ պարօն Անդրանիկ, որովհետեւ Ձեր դուստր Մարիին հետ միասին ինձ հնարաւորութիւն տուիք ճանաչել Հայ հերոսի մը կեանքի պատմութիւնն ու թոյլ տուիք այդ մասին պատմել:

Թող յիշատակը դաւար մնայ Յիսուս պետ Կավրոշ:

Մանհա ՔԵՇԻՇԵԱՆ  
Մայիս 2018թ.